ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունց

- ԵՐԿԻՐ/ՔԱՂԱՔ/ԺԱՄԿԵՏ

Սալենտո (Իտալիայի Հանրապետություն),

2018 թ. սեպտեմբերի 8-10-ը

- ***ՆՊԱՏԱԿԸ***

Մասնակցություն Սալենտոյի միջազգային 15-րդ կինոփառատոնի փակման պաշտոնական արարողությանը
Իտալիայի Ապուլիա մարզում կայացած հանդիպումների ընթացքում քննարկելու հայ-իտալական մշակութային համագործակցության խթանման վերաբերյալ մի շարք հարցեր:

Հայ-իտալական մշակութային համագործակցության շրջանակում Տրիկազեի քաղաքապետ Կարլո Չիուրիի և Սալենտոյի միջազգային կինոփառատոնի տնօրեն Լուիջի Կոմպանիլլեի հրավերով 2018 թ. սեպտեմբերի 8-10-ը մեկնեցի Իտալիա՝ մասնակցելու Սալենտոյի միջազգային 15-րդ կինոփառատոնի փակման արարողությանը: Միջոցառման շրջանակում համերգային ծրագրով հանդես եկավ

Հայաստանի «Նարեկացի» ժողովրդական գործիքների նվագախումբը՝ կոմպոզիտոր, թառահար, ՀՀ վաստակավոր արտիստ Արտեմ Խաչատուրի ղեկավարությամբ:

Միջոցառմանը հրավիրված էին մասնակցելու հայտնի կինոգործիչներ, կինոքննադատներ, դերասաններ, պրոդյուսերներ, ինչպես նաև միջազգային խոշոր կինոարտադրող ընկերությունների ղեկավարներ, Իտալիայում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ, արվեստասեր հանրություն:

Սալենտո միջազգային կինոփառատոնը (SIFF) 2004 թ. ի վեր անցկացվել է Երևանում, Մոսկվայում, Լոնդոնում, Սանկտ Պետերբուրգում, Հոնգ Կոնգում, Լոս Անջելեսում, Նյու Յորքում, Պեկինում, Թեհրանում և այլուր: Վերջին երեք տարիների ընթացքում կինոփառատոնն անցկացվեց Հայաստանում՝ «Նարեկացի» արվեստի միության հետ համագործակցությամբ (NAI):

Բացմանը ելույթի խոսքով հանդես եկավ կինոփառատոնի հիմնադիր նախագահ Լուիջի Կամպանիլլեն, ով հակիրճ ներկայացրեց փառատոնի մասին տեղեկատվությունը և հետագա ծրագիրը:

Իմ պատասխան խոսքում շնորհակալություն հայտնեցի փառատոնի կազմակերպիչներին հրավերի համար, այնուհետև ներկայացրի հայաստանյան կինոոլորտում իրականացվելիք փոփոխությունները: Ընդգծեցի, որ Հայաստանը բացը նոր համատեղ միջազգային ծրագրերի իրականացման համար:

Իտալիա գործուղման ընթացքում հանդիպումներ ունեցա Իտալիայի Ապուլիա մարզի նահանգապետ Միգելե Էմիլիանոյի, Իտալիայի հարավային հատվածի ղեկավար (առանց պորտֆելի նախարար) Բարբարա Լեչչեի, Ապուլիա մարզի մշակութային հարցերով խորհրդական Լորենադա Կապոնեյի, Ապուլիա մարզի Լեչչե վարչական շրջանի ղեկավար Անտոնիո Կաբելլոնեի, Տրիկասեյի քաղաքապետ Կարլո Չիուրիի

հետ: Քննարկվեցին Հայաստան-Իտալիա մշակութային համագործակցության խթանման հետ կապված խնդիրները, մշակութային տարբեր ոլորտներում համատեղ նախագծերի իրականացման հնարավորությունները և պայմանները, ինչպես նաև Իտալիայում կայանալիք միջազգային փառատոներին հայաստանյան կոլեկտիվների և անհատ կատարողների մասնակցության հետ կապված խնդիրները:

Իտալիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում երկուստեք կարևորվեց համայնքի հայանպաստ գործունեությունը:

Շնորհակալություն եմ հայտնում Իտալիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վ. Բաղդասարյանին և դեսպանության ողջ անձնակազմին՝ գործուղմանս ընթացքում աջակցություն ցուցաբերելու համար:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ/ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- ***Սալենտոյի միջազգային կինոփառատոնի տնօրեն Լուիջի Կոմպանիլլեին հրավիրեցի ս. թ. նոյեմբերին այցելելու Հայաստան՝ կինոոլորտում համատեղ ծրագրերի մանրամասները քննարկելու նպատակով:***

9/17/2018

X

VERIFIED OCSP 9/17/2018 15:02:40 GMT+4

Signed by: MAKUNTS LILIT 5711830910

ՀՀ մշակույթի նախարար՝

Լ. ՄԱԿՈՒՆՑ